

Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ւ Ի Ն Ք

Ի ՓՈՒՐ Ե Ի Ի ՄԵՄ ՀԱՅՍ

ՃԱՆԱՊԱՐՀ ՅԱՆԿԻԻՐԻՈՅ Ի ՄԱՐԶՈՒԱՆ

Անցեալ յԱնկիւրիոյ յարեւելս հիւսիսոյ և հասեալ զիտրիս տաղը լերինս, 12 ժամու ճանապարհաւ, ընդ առաջ լինի Գալեձիկ՝ աւանն. բերդ նորա փոքրիկ 'ի գաղաթն ապառաժ լերին, և 'ի ստորոտս նորա շուկայն, և տունքն թուով 900 յորոց 850 տաճիկք են և 50 Հայք, որոց է և փոքր եկեղեցի մի, և 'ի նմա պա. հեալ պատուով երկաթագիր աւետարան մի թերի, զոր գտեալ ասեն ընդ եր. կրաւ 'ի նորոգութեան եկեղեցւոյն: Այգեստանք և պարտէզք պտղոց առատ են արտաքոյ աւանին. իսկ երեւելի բերք նորա համարի գլխորդ 'ի չըջակայ գիւղ. րէից: Տօնավաճառ լինի անդ յաւուրս կիւրակէից: Զպատճառ անուանակոչու. թեան աւանիս այսպէս աւանդեն. զամենայն մերձակայ սահմանս, ասեն, հան. դերձ բերդօրէիւք նուաճեալ օսմանեան պետութեանն, հարցանէ թագաւորն թէ մնաց այլ ևս տեղի գրաւելոյ. և ասեն նմա թէ կայ և այլ գլխակ մի. նմին իրի զկնի տիրելոյն կոչեցաւ նա Գալեձիկ:

Սիւնկիշրիշ, կամ ըստ հնչման այնց գաւառացն Սօնկոշրիշ՝ աւան մեծ քան զԳալեձիկ բնակեալ 'ի Տաճկաց և 'ի Հայոց:

Զօռուձ քաղաքաւան տաճկաբնակ. 2180 տունք են 'ի նմա. բերք նորա ճեճ. րի. երկիրն մշակեալ և ցորեան առատ, զի դաշտավայրն յԱպուսալ պօտուէ և այսր վեց ժամու տարածութեամբ ցորենաբեր արտորայ է առ հասարակ: Ար. տաքոյ աւանին կայ ամրոց մի փոքր և անշուք. և 'ի հանդիպոյ զինուորանոց նո. րաչէն: Անուանի է մի 'ի բաղանեացն յաղաղս գունագոյն քարանց յատակին, զոր 'ի Պարսից բերեալ ասեն:

Ի ճանապարհին Անկիւրիոյ մինչև ցՄարգուան գտանի ուրեք ուրեք խոտն զոր տաճիկք էսրար կոչեն, արբեցուցիչ քան զափիոն. տերեք նորա նման կանեփոյ և ծանրահոտ յոյժ. զոր և մանրեալ վարեն որպէս ծխախոտ:

Մ Ա Ր Զ Ո Ւ Ա Ն

Գիւղաքաղաք մօտ առ ստորոտով լերանց և առաջի նորա դաշտ ցորենոյ մե. ծատարած, 'ի լերանց չըջապատեալ. որոյ երկայնութիւն յարեւմտից յարեւելս տեէ իբր ժամս չորս: Տունք Հայոց ևեթ հաշուին 500 և քանի մի տունք բոշայից: Եկեղեցին նորաչէն կոչեցեալ Աստուածածին՝ մեծատարած է և փառահեղ, որ և երկրորդ համարի յետ եկեղեցւոյն Արմաշու. երկայնութիւն նորա մինչև ցրեմն 34 1/2 մեղր, և լայնութիւնն 19. բարձրութիւնն չէ համեմատ տարածութեանն որպէս և կամարք խորանացն: Ընդ չըջապատ եկեղեցւոյն 'ի ներքուստ է չըջա.

նակ բարձր 'ի չափ բարձրութեան վերնատան կանանց, յոր ելանեն 'ի թափօր յաւուրս հանդիսաւոր տօնից. իսկ դրունք չըջանակիդ են 'ի կողմանէ դրանց աւանդատանցն. յերկոսին ծայրս չըջանակիդ են ամպիոնք հանդէպ միմեանց. յորոց 'ի միումն ընթեռնուն 'ի պատարագի զգիրս առաքելականս և մարդարէականս, և 'ի միւսումն զաւետարան: Գաւիթն եկեղեցւոյն ոչ միայն է առ դրամբն, այլ և երկուստեք նորա 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ, և մի մի խորանք 'ի ծայրս նոցա յարեւել: Հոյակապ եկեղեցիս շինեցաւ յամին 1835 յառաջնորդութեան Յակոբոսի արքեպիսկոպոսի, որ եկաց երբեմն պատրիարդ 'ի Բիւզանդիա: Պահին յեկեղեցւոյս յիսնիւ չափ ձեռագիր մատենաք, ճաշոցք, յայսմաւուրք, մաշտոցք, աւետարանք և գանձարան մի:

Ի հասարակաց շինուածոց երեւելի է Դաշխանն, քարակերտ մէտրէսէն և պէզէսթէն և ոմանք 'ի մզկիթաց: Կէս ժամ արտաքոյ քաղաքին 'ի հիւսիսակողմն է Խտըլլըք 'ի վերայ բլրոյ, և է գերեզման մի և 'ի վերայ նորա եղջերք եղանց, և 'ի կողմանէ աղբիւր բխեալ և աւազան, յոր յաճախեն միօրինակ տաճիկք և քրիստոնեայք:

Բնաւորութիւն հայազգի ժողովրդոց գիւղաքաղաքիս, հակառակ համբաւոյն հնչելոյ յականջս ուամկին այլոց քաղաքաց, քաղցրաբարոյ է և մարդասէր. առ եկն անծանօթ փոքր մի ընտանութիւն ցուցեալ յարին և պատուեն հիւրասիրութեամբ. և բնաւորութիւնդ այդ անտի է զի ոչ փոքրատարած քաղաքան իւրեանց շատացեալ չըջին վաճառականութեամբ յայլ և այլ քաղաքս, սովորեալ հանապազ ընդ օտար ժողովրդոց: Իսկ նիւթ վաճառականութեան նոցա է այլ և այլ ձեռագործ բամպակեղինաց՝ ստորին յոյժ, զոր առաքեն ոչ միայն 'ի չըջակայ սահմանս երկրին, այլ և 'ի Ղլիմ առ Թաթարս, և յԱնափա: Առատ է և ցորեան նորա զոր ընդ ճանապարհ Սամսոնի յգեն 'ի Պօլիս:

Մենաստանն Հայոց Չարխափան աստուածածին կոչեցեալ ժամաւ միով հեռի է 'ի քաղաքէն 'ի գիւղն կոչեցեալ Քեօրքեօյ. եկեղեցին նախ հիմնեալ յԱնդրէասայ առաքելոյն, որպէս ասեն, և ապա կործանեալ յաւազակաց՝ վերստին շինի: Յաւանդութենէ ասաի առեալ եղեալ է արձանագիր 'ի ճակատ եկեղեցւոյն: Մենաստանն ոչ է հնաշէն, և ոչ նշանաւոր ինչ 'ի նմա: Ուխտաւորաց բնակարանն որիչ է հանդէպ մենաստանին: Արտաքոյ եկեղեցւոյն առ հիւսիսային որմով է գերեզման Յովհաննու վարդապետի բաղտատեցւոյ վախճանելոյ 'ի թըւիս ՌՄԽԵ, և է շինող մենաստանին: Առ նովաւ է այլ գերեզման Աբրահամու պատրիարդին Պօլսոյ վախճանելոյ յամի 1819 որ էր յՕրպելեան ցեղէ, որպէս յայտ առնէ արձանագիր շիրմին:

Օդ Մարզուանայ առողջարար է յոյժ:



Ա Մ Ա Ս Ի Ա

Քաղաք փոքր, ութ ժամաւ հեռի 'ի Մարզուանայ և մերձ յերկրորդ Հայս, սահման նորա 'ի հնումն թուի սկսեալ 'ի նեղցէ լերանցն առ որում աւարտի մեծ դաշտավայրն Մարզուանայ. և լերինքդ աղխախեալք ձգին երկուստեք մօտ առ միմեանս, ճանապարհ 'ի միջի ունելով չրջապտոյտ, և պարտէզս թթենեաց և պտղատու ծառոց և այդեաց անբաւ, տեւալ ժամս չորս. և քաղաքն 'ի լեռնա մէջս անդ կամ 'ի սպառուածի նոցին շինեալ յերկուս բաժանի, կէս 'ի հաւրաւոյ 'ի ստորոտ ապառաժ լերինն յորոյ 'ի գագաթան է բերդն, և կէս 'ի հիւսիսոյ 'ի ստորոտ հանդիպակաց լերանցն, գետոյն իւեայ ընդ մէջ անցանելով. և այլ և այլ հաստատուն կամրջօք հաղորդին առ միմեանս կողմանքդ երկոքին:

ՄԻՀՐԻԱՏԱՅ ՊԻՄԱՓՈՐ ԱՅՐԲՆ. — Ամասիա քաղաք թէպէտ և դրիւքն ոչ ցանկալի և օդոյն վատութեամբն անսիրելի, սակայն հիացուցանէ զամենայն տեսողս մեծազործ հնութեամբքն: Միհրդատ մի 'ի դիւցազանց մերոց կողմնապահ 'ի Կեսարիա կացեալ, տիրապետեաց զԱմասիա, որպէս յայտ առնէ հին պատմութիւնն¹. և սահմանակալ քաղաք յարդարեալ զնա փոքուն Հայոց յարեւմտից կողմանէ շինուածս մեծամեծս արար 'ի նմա, յորոց մասն մի անջնջելի կան մինչև ցայսօր ժամանակի, անդրդուելի կացեալ ընդդէմ բռնութեան բռնաւորաց և տարերաց հազարամեայ ժամանակաց: Արդ Միհրդատայ հնութիւնքն են առ 'ի կողաց բարձու լերինն ապառաժի յորոյ գագաթան է բերդն. և են նոքա զերեսօք ապառաժին ուղղահայեաց կռանահարեալ այլք, սենեկաչափ տարածութիւն ունելով 'ի ներքս, քառակուսի բարձրադիր դրամբ. իսկ երկուստեք և 'ի թիւ կանց այրիցդ իւրաքանչիւր փորեալ է ապառաժն 'ի չափ բարձրութեան նոցա վերուստ 'ի վայր փողոցաձև. այնպէս զի հիմն նոցա և վերին կողմն միապաղաղ կցեալ ընդ լերին, շուրջ փողոցաւն զատուցեալ են անտի: Երեք են դոքա առ ընթեր միմեանց. իսկ այլ երկուցն, որ հինգ վայրկենիւ 'ի բացեայ են 'ի նոցանէ, սանդխաձև է ճանապարհն որ հանէ մինչև ցբարձրութիւնն, խելս և սանդխոցն ունելով ըստ կողմանէ զառ 'ի վայր լերինն, համայն կռանահարեալ և միապաղաղ սանդուխքն բազմաստիճան և խելքն և այլքն և փողոցք նոցա շուրջանակի: — Արտաքոյ քաղաքին կան և այլ երկու 'ի նոցանէ. այլ ոչ փողոցաձև շուրջատուցեալ 'ի լեռնէ: — Են և երկու այլ ևս 'ի կողմն մի քաղաքին փոքր քան ըդ նոսա:

1 « Եւս բազում ժամանակաց Միհրդատ քեռ. » այր Տիգրանայ Հայոց արքային կողմնապահ գուրով աներով իւրով 'ի Միթակ քաղաքի որ այժմ կոչի Կեսարիա, գայ ունի զԱմասիա 'ի Հայս գրաւելով. . . սահմանակալ քաղաք յարդարեաց ընդարձակագոյնս պարսպեալ առ կատարով լեռանց երկոցունց կողմանց գետոյն. շինեալ և արքունիս ըստ հիւսիսոյ կողմանն գետոյն առ ստորոտով քարայրեղանակին. և նախ ապառաժիւք մեծամեծ հասավիճի կանգնեալ վիմօք և 'ի վե-

» ռայ զարքունիան կանգնեալ, և արեգակնային » դիմի անձաւին շիրիմս քարակոփս և ճանապարհս » սանտիստաձև և տունս քարայրս գանձուց կռա. » ծոյս յօրինեալս համանման ձեւակերտացն Հա. » միւրմայ 'ի Վան, և խազնաթ կեփայս, զորս լե. » ցեալ գանձիւք տիրացաւ ոչ սակաւ ամս մինչև » 'ի գալն Պամպէի. ընդ որում մարտուցեալ և » պարտեալ Միհրդատ և անկեալ 'ի Պոնտոս մե. » ունի 'ի Սինոպ »:



ԱՅՏԱԼԸ ՄԱՂԱՐԱ.— Արտաքոյ քաղաքին է և այս քարայր առ արահետ ճանապարհաւ . ձեռով և մեծութեամբ և փորուածովն ներքոյ և շուրջ փողոցն նման այլոցն¹. այլ առաւելու քան զնոսա ապակէբռովն որով օծեալ է բովանդակ ներքոյ և արտաքոյ մինչև երևել արտաքին առարկայից 'ի նմա իբրև զհայելի . յայն սակա Այլնայր մաղարա կոչի 'ի բնակչաց : Այդ փայլունութիւն նորա այնքան սաստիկ էր յառաջագոյն , մինչև 'ի ցայտելոյ ճառագայթից արևուն խտտղիլ աչաց անցաւ . րացն , վասն որոյ ասեն Փաշայի ուրումն յանցանել 'ի հանդիպոյ ճանապարհէն , որ կէս ժամաւ հեռի է յայրէն յայնկոյս գետոյն , շրտուցեալ երկվարացն , հրամայէ հուր լուցանել շուրջ զայրին , յորմէ մթաղնի նախկին փայլունութիւն նորա : Բուռ պրին այնքան թանձր է և կարծր , մինչև դանակաւ հաղիւ մարթ է գծել 'ի վերայ նորա : Ի ներքս յայրին նկարէն պատկերք բազում են յորմունսն , և տակաւին որիչ երևին 'ի վերայ կամարին երկոտասան առաքեալք . յորմէ յայտ է թէ 'ի ժամանակս քրիստոնէութեան յեկեղեցի փոխեալ են զնա . արտաքոյ 'ի ճակատուն ստուարատառ արձանադրեալ է :

T H Σ

A P X I

I E P E Y Σ , այսինքն երկրի (դէց) ՔՐՄԱՊԵՏ

Ջքարակոփ անձաւացդ թէպէտ և այլ ընդ այլոյ պատմիցեն ոմանք 'ի բնակչաց տեղոյն , սակայն 'ի համառօտ բանից հնոյ պատմութեանն բառնի ամենայն երկբայութիւն որպէս կարծեմ . այն ինքն է « շիրիմս քարակոփս . . . և տունս քարայրս գանձուց » : Իսկ որ առ ստորոտով քարալեռնակին զարբունիսն , ասէ , կանգնեալ , թուի թէ այն աւերակք իցեն որ ստորև քան զանձաւան զայնոսիկ երևին , որոց որմունք կան տակաւին կիսափուլ . թէպէտ և 'ի քարանցն և 'ի շինուածոյն ոչ արժանի ձեռին Միհրդատայ թուիցին , այլ մարթի ասել թէ 'ի վերայ նախնոյ հիմանն շինեալ է յետնոց :

ԲԵՐԴՆ . — Բերդն Ամասիոյ , որպէս ասացաք , 'ի գաղաթան է բարձու լերինն ապառաժի յորոյ 'ի կողաց կան քարակոփ անձաւքն . և է իմպառ աւերակ : Բնակիչք բազում էին անդ յառաջ ժամանակս իբրև պահապանք , և ազատք 'ի քաղաքական տրոց . զի ճանապարհն որ հանէ անդը՝ երկար է և դժուարին , և առ ամենայն պէտս իւրեանց հարկ էր իջանել 'ի քաղաքն . այլ 'ի բառնալ ազատութեանն այնորիկ՝ ցրուեալ բնակչացն՝ անապատացաւ և բերդն : Շինուած նորին կամ՝ պարիսպքն , որ մեծաւ մասամբ աւերակ կան , կարի անկանոն են . զի ըստ դրից ապառաժ լերինն հիմնեալ են : Որպէս փոքր է տարածութեամբ , նոյն զուրկ և 'ի մեծագործութենէ . նմին իրի չմարթի ասել հաւաստեալ 'ի Միհրդա-

¹ Չափ Այնալը մաղարային . մէջն , երկայն՝ մեզր 3 . 30 . լայն 3 . 20 . աջակողմեան խորանաձև որիչ տեղին երկայն 2 . 30 , լայն 1 . 15 , բարձր 2 . 30 մեծութիւն դրան , բարձր 1 . 15 , լայն 1 , բարձրու-

թիւն 'ի գեանոյն մինչև ցգուռն 4 . 40 , ճակատն յանկենէ յանկին 7 . 50 , լայնութիւն որմաձև սեանց երկուսուք 2 :

տայ մնացորդ . սակայն և փոփոխութիւն ոչ սակաւ կրեալ է ընդ ժամանակս ժա-
մանակս , որպէս երևի և 'ի տաշածոյ և յանտաշ քարանցն :

ՃԼԱՄՊՈՒԼԱ . ԳՈՒԲՆ . — Թէպէտ և ոչ նշանաւոր ինչ են պարիսպք բերդին Ամա-
սիոյ , սակայն ոչ թեթեւ ինչ է շինուած ճլաւպոշլային 'ի մէջ բերդին . և է դա
գետնափոր տեղի անդնդախոր , այնպէս կոչեցեալ 'ի բնակչաց , ոչ ուղղահայեաց
այլ խոտորնակի կամ առ 'ի շեղ . կամարաձև փորեալ են զապառաժ լերինն
բարձր քան զհասակ մարդոյ , և աստիճանս 'ի ներքոյ , որ արդ հողով ծածկեալ
են . և է մտանելի 'ի ներքս զգուշեալ . զյատակէ նորա ասեն թէ մերձենայ մին-
չև 'ի ստորոտ լերինն : Չգետնափոր տեղոյս ասեն ոմանք եթէ ջրամբար իցէ , և
այլք թէ տեղի փախստեան 'ի պաշարել բերդին : — Հանդէպ մոից ճլաւպոշ-
լային է գուրն յանցաւորաց , Ամասիոս զնտանը ասացեալ ծանօթ ամենեցուն .
խորութիւն նորա վեց կամ եօթն մեղր . բերանն հաւասար գետնոյ , քառակու-
սի խուփ ունելով ընդ որ իջուցանեն չուանալ զյանցաւորն . շինուած նորա բո-
լորչի է իբրև ջրհորոյ և լայն . մի կողմն կից ընդ լերինն և միւսն շինեալ 'ի քա-
րանց . չիք սենեակ 'ի ներքս , այլ դատարկ ամենեւին :

ԶՐԱՀԳՆ . — Առնթեր արտաքին դրան բերդին 'ի վերնատան սենեկի ուրեք
ամփոփեալ պահին հին զրահք , քառանիւ չափ . յորս են սաղաւարտք պէսպի-
սաձև , են որ բոլորչի և սրածայր՝ հովանաձև չրջանակաւ , և են որ ըստ հասա-
րակ ձևոյ զինուորական սաղաւարտաց . լանջապանակ , չղթայաշար զրահք , գըլ-
խանոցք ձիոյ , ամենայնն երկաթի . դարձեալ և այլք 'ի կտաւոյ մորթապատ .
գոն և սլաքք , այլ խորտակեալ մանր :

Ի ներքս բերդին երևին յաւերական երկու կամ երեք տաճիկ արձանագիր ,
այլ 'ի վերայ ներքին դրանն է կիսեղծ տող մի յունարէն (թիւ 6) : Ի վերայ ճա-
նապարհին յերթալն 'ի քաղաքէն 'ի բերդն , կան երկու արձանագիր փորեալ 'ի
վերայ մեծամեծ քարանց , և են առնթեր միմեանց . (թիւ 7-8) :

ԿՅՈՔ ՄԵՏՐԵՍԵ . — Յարեմտեան կողմն քաղաքին 'ի վերայ արահետ ճանապար-
հի 'ի ձախմէ կայ մզկիթ մի մեծ . զորմէ հաւանական էր ասել ըստ ոմանց թէ
եկեղեցի լեալ իցէ յառաջագոյն , եթէ չհայէր ընդ հարաւ : Իսկ բնակիչքն կեօք
մէտրեւէ կոչեն . և են նորա ինն գմբէթք , և մասն մի որ առ արտաքին դրանն՝
աւերակ : Թէպէտ և անդործածելի է , սակայն պատուի մեծապէս 'ի Տաճկաց և
չէ համարձակելի ամենայն ումեք 'ի քրիստոնէից մտանել 'ի ներքս , բայց եթէ
բազում աղաչանք . քանզի 'ի ներքս առ դրանն 'ի ձախմէ է գետնափոր տեղի
մի կամարաչէն քարակերտ , յորում եղեալ են 'ի բացի երեք մարմինք մարդոյ
անփուտք 'ի դագաղս . միոյն ոսկերոտին ևեթ կայ , և այլոց հանդերձ մարմնով-
քն . ամենայն մոողաց ցուցանեն զնոսա , բայց ոչ տան ձեռն մխել , այլ աղօթել :
Չէ ումեք ծանօթ թէ որոյ իցեն մարմինքս և ուստի :

ՂԼԻՃ ԱՍԼԱՆԱՅ ՄԱՀԱՐՁԱՆ . — Հանդէպ կեօք մէտրէսէին է մահարձան Ղլիճ Աս-
լանայ , բովանդակ քարաչէն և քան զմզկիթն փառաւոր : Յատակ մահարձանին
'ի ներքուստ բարձր է յերկրէ , և ընդ կողմնակի դուռն մտանելի 'ի ներքս քա-
րակերտ սանդղօք : Գերեզմանն կճեայ է , և տաճիկ արձանագիր բարձրաքանդակ
ընդ ամենայն չրջապատ նորա : Առնթեր գերեզմանի նորա կան և այլ ևս ութ
գերեզմանք , թերեւ կնոջ իւրոյ և որդւոց : Ի վերայ արտաքին որմոյ մահարձա-

նին կան երկու արձանագիր ազուցեալ յանպատշաճ տեղով. մին 'ի թիկանց առ անկեամբ և բարձր. իսկ միւսն 'ի կողաց հաւասար գետնոյն, և է տապանագիրն այս (թիւ 9): Մերձ առ նոյն մահարձանն 'ի վերայ նոյն փողոցի կան այլ և այլ աւերակք յորս երեւին կրկին արձանագիրք (թիւ 10-11): Առնթեր Ղլիճ ասլանայ է և այլ մահարձան մի, և վիմափոր գերեզման 'ի միջի նորա, որոյ 'ի մի կողմն շրջանակին որ հայի ընդ գուռն փորագրեալ կան գլուխք մարդոյ:

ԹԻՄԱՐԻԱՆԷՆ. — Աւերակ է թիմարխանէն որ մերձ է առ մուտս քաղաքին. շինուածն քարաշէն և ոչ հասարակ ինչ. շրջանակ դրանն մեծաւ տարածութեամբ զարդարեալ է մանր փորագրածով ըստ տաճկական ախորժակաց, և արձանագիր տաճիկ 'ի վերայ դրանն: Մայր շինուածոյն որ հայի յարեւելս կոյս խորանաձև է, և երկուստեք սենեակք 'ի վերուստ մինչև ցգուռն. և առաջի սենեկացդ կճեայ սիւնք կարգաւ: Միջին մասն յարկին որ է կողմանէ 'ի կողմն սեանցն, բացօթեայ է, կամ այնպէս շինեալ 'ի սկզբանն: Ի մի յաջակողմեան սենեկացն որ է առ դրանն, աւազան փոքրիկ ազուցեալ կայ յորմն. յորմէ կարծի 'ի ռամկաց ոմանց եկեղեցի լեալ. սակայն կողմնակի սենեակք նորա և զարդք ճակատուն և տաճիկ արձանագիրն չվկայեն այդմ:

Առ երի դրանն թիմարխանէի 'ի ձախմէ կայ աղբիւր, և առ նովաւ հաւասար գետնոյն երեւի երկտող արձանագիր յունարէն երկայնատառ. (թիւ 12): Այլ արձանագիր 'ի փողոցի ուրեք մօտ առ մզկիթաւ, ստորին մասամբն կիսաթաղ ընդ երկրաւ, և միջոցն (կիտանիշ) ընդ սեմովք. (թիւ 13):

ԵԿԵՂԵՅԻՔ, ԴՊՐՈՅՔ, ՄՁԿԻԹՔ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԵՒՈՒԱԾՔ. — Երեք են եկեղեցիք Հայոց. Ս. Նիկողայոս, Աստուհասիկ, շինեալ 'ի Թուխ ՌՄԾԳ, և Ս. Յակոբ 'ի ՌՄՂ փառաւոր քան զայլն, և շրջանակ լայն ածեալ 'ի ներքուստ զորմովք նորա մարդաչափ բարձրութեամբ 'ի գետնոյ վասն թափօրի. որպիսի է և եկեղեցին Մարգուանայ: Ի վերայ երկուստեք խորանացն կան և այլ երկու խորանք, 'ի շրջանակացն ելանելի անդ: Արտաքոյ եկեղեցւոյն ընդաջակողմեան որմովն առաջի մկրտտարանին գերեզման խաչատրոյ ուրուք նահատակի: Երեք դպրոցք են Հայոց առ իւրաքանչիւր եկեղեցեալ: — Հոյակապ 'ի մզկիթսն է Սուլթան Պայեզիտ մեծաժեծ կճեայ սեամբք առաջի գաւթին. և հրապարակ առաջի նորա մեծ, և է յեզր գետոյն: Փառաւոր են նոյնպէս և Իսախանն և Պէղէստէնն. և շուկայն մեծաւ մասամբ մաքուր քան զայլ տեղեաց և յատակեալ: Ի վերայ գետոյն անիւս կառուցեալ են անհղ մեծութեամբ, որք 'ի բռնութենէ գետոյն հոլովեալք մեծաւ շառաշմամբ դուզքն հաղորդեն զջուրն յազուգայս, յորոց ոռոգանին պարտէզք և այգետտանք:

ՈՒՅՏԱՏԵՂԻՔ. — Հանգէպ Այնալը մաղարային յայնկոյս գետոյն է գերեզման Բասիլիոսի եպիսկոպոսին Ամասիոյ զոր յիշէ Խորենացի, Բ, ԶԸ. յառաջագոյն եկեղեցի ասի լինել անդ, այլ արդ ոչ այլ ինչ տեսանի բայց վարկաբարձի կոյտ քարանց. և է տակաւին ուխտատեղի: Զվկայարանէս յիշատակ լինի 'ի ձեռագիր Յայսմաւուրս որ պահի յեկեղեցւոյ Աստուածածնի, այսպէս. « ՊՂ. առ թագաւորու » թեամբ սուլդան Մուրատին հօր Ֆէթիհ սուլդան Մուրատին նախ քան զառումն Պօլսոյ, ոմն իշխան Խըտրը փաշա անուն քակեաց զմնացեալ հիմունս եկեղեցւոյն 'ի շինուած բաղանեաց. և անդ յայտնեցան նշխարք սրբոյն Բասիլի-

» լիութի 'ի ներքոյ խորանին և էր մնացեալ ամբողջ իբրև զկենդանի զոր տեսեալ
» ոչ մերձեցան այլ կրկին ծածկեալ ամրացուցին . և է անդ 'ի տեղին որ կոչի
» Այվասիլ » :

ԱՂԲԻԻՐ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ . — Ժամաւ միով հեռի 'ի քաղաքէն 'ի վերայ ճանապարհին
'ի ձախմէ գոյ աղբիւր ինքնաբուխ 'ի կողաց լերին , 'ի մէջ փոքր քարայրի . անդ
գտեալ ասի գլուխ Ոսկեքերանի . և է տեղին յաճախեալ յուխտաւորաց :

ՄԻՀՐԳԱՏԱՅ ԶՐԱՆՑԳՆ . — Ոչ սակաւ զարմանաց արժանի է և չրանցքն Միհրյաւ .
տայ ժամաւ միով հեռի յաղբերէն Ոսկեքերանի ըստ ձախմէ ճանապարհին . և
է առու լայն կռանահարեալ զերեսօք ապառաժ լերին մարգաշափ բարձր յեր-
կրէ . տեւեալ երկայնութեան նորա աւելի քան զկէս ժամ ոչ ուղիղ գծիւք , այլ
խոտորնակի որպէս ինչ գիւրք լերինն հանդիպեալ են . սակայն յաւերակս համա-
րեալ է արդ : Զսա տաճիկք Ֆէհրաւտ եւափոռսոռ կոչեն , որ այն ինքն է Միհրդատ :
Եւ առասպելեն ռամիկք այսպէս , եթէ Ֆէհրատդ այդ այր հուժկու եղեալ տար .
փացեալ է դստեր թագաւորի ուրուք . և 'ի խնդրել զնա իւր կնութեան , ձեռն
արկանէ շինել զջրանցսդ ըստ խնդրոյ թագաւորին փոխանակ դստեր նորա . այլ
յետ շինութեանն ժխտէ թագաւորն զխոստումն իւր , և Ֆէհրատ առ դառնու-
թեան սրտին զնիգ երկաթի քարահատացն 'ի վեր արձակեալ մեռանի 'ի ներքոյ
նորա : Այսպիսի ինչ պատմի յաւանդութենէ և զշինողէ Տէլիքի դաշին 'ի Տրա-
պիզոն :

Ա Ղ Ա Ի Ն Ի

ԺԱ

Օրսոյի քունը չտարաւ մէկէն , անոր
համար երկրորդ առաւօտը շատ ուշ ար-
թընցաւ : Անկողնէն ելածին պէս՝ առջի
բանը իր թշնամեաց տունն աչքին հան-
դիպեցաւ և անոնց պատուհաններուն
նեղ ծակերը : Վար իջաւ , հարցուց քը-
րոջն ուր ըլլալը : — Խոհանոցն է , պա-
տասխանեց Սալէրիա անուն աղախի-
նը , գնտակ կը ձուլէ : Այսպէս կռուոյ
և պատերազմի գաղափար կ'ելլէր միշտ
Օրսոյի առջև :

Աղաւնի աթոռակի մը վրայ նստած
էր , առջիւր շատ մը նոր թափած կա-
պարեայ գնտակներ , որոնց աւելորդ
ծայրերը կը կտրէր :

— Ի՞նչ բանի ետեւէ ինկեր ես , հար-
ցուց Օրսոյ :

— Տեսայ որ հազարապետին հրացաւ
նին համար գնտակ չունիս , պատասխա-
նեց քոյրն անոյշ ձայնիւ , կաղապար մը

գտայ ու մինչև իրիկուն քսանը չորս լուց-
կի (գզ. Cartouche) պիտի պատրաս-
տեմ քեզի , եղբայր :

— Փառք Աստուծոյ պէտք չունիմ :

— Առանց պաշարի կենալու չէ , Օրս՝
Անտոն . մոռցեր ես երկիրդ և քաղա-
քակիցքդ :

— Թէ որ մոռցած ալ ըլլայի , մէ-
կէն միտքս բերած կ'ըլլայիր դու : Կ'ու-
զէի իմանալ թէ քանի մը օր առաջ մեծ
սնտուկ մը հասաւ հոս :

— Այո , եղբայր . կ'ուզեմ խուցդ տա-
նիմ :

— Դո՛ւ տանիս . անիկայ վերջընելը
քու բանդ չէ . . . Մարդ մը չկայ հոս որ
խուցս բերէ զանիկայ :

— Կարծածիդ չափ տկար չեմ , պա-
տասխանեց Աղաւնի՝ բազուկները ցու-
ցընելով : Քեզ տեսնամ Սալէրիա , ը-
սաւ աղախնոյն , օգնէ ինծի :

Եւ սկսաւ ինքիրեն վերցընել բոլոր
սնտուկին ծանրութիւնը . բայց Օրսոյ
աճապարեց ու օգնեց :

— Աս սնտուկին մէջ քեզի համար